ՆՈՐ-ՕՐ

№ 108 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի 6 Յուլիսի **1888** Շորեքշաբթի 6 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 108

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով 5 կոպեկ։
Բաժ. նորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրությեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարությունների գաւաթն 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

Ծնողք Յովհաննէս և Թալիա և եղբարք—Գաբրիել, Բագրատ և Պետրոս Ալիբէկեանցները ցաւօք սրտի յայտնելով առաջիններ իրենց որդւոյ և վերջիններ՝ իրենց եղբօր՝ ՅԱՐՈՒԻԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱԼԻԲԷԿԵԱՆՑԻ մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին ներկայ գտնուել ննջեցեալի յուղարկաւորութեան հանդիսին, յուլիսի 7-ին, հինգշաբթի օրը, տասը ժամին առաւօտեան Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցին։

Ամբիծք կը կատարուի չորեքշաբթի՝ յուլիսի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին Մողնու եկեղեցում։

2—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Նայելց Աէքսանդրապոլ (շարուն.)։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն Լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

«Նոր-Դար»-ի պատասխանները։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կ. ՊՕԼՍԻՅ.—Վերջապէս ցարութիւն պատրիարքի հրաժարական ընդունած է։ Պատմութեան կ՚վերաբերի նրա և խմբակի մը գործառնութիւններն։ Տեղտեղ ընտրուած է Սիմէօն եպիսկոպոս՝ փոխանորդ Ներսուպեմի, այնպէս որ դրութիւնը նոյնը կը մնայ։

Սակայն մեծ կարիք կ՚զգացուի պատրիարքական գահ բարձրացնել եպիսկոպոսաց արժանաւորագոյնին, որ Ճմմարիտ մկրնորդ գառնալով ազգին և Օսմանեան բարեխնամ կառավարութեան, կարող լինինք դրութիւններս բարւոքել՝ խնդիրներն հարթելով այնպիսի տագնապներից պարագային մէջ, ինչպէս ներկայս է։ Բայց եթէ չ՚ակռոն այդ, այն ժամանակը կ՚կոստի պատրիարքական գաւազանն յանձնել Բլուսայի առաջնորդ Գեր. Բարթուղիմէոս եպիսկոպոսին։

Կան աշխատողներ այլ, որք պատրիարքական գահ գՍիմէօն եպիսկոպոսն՝ ներկայ պատրիարքական փոխանորդն բարձրացնել կ՚ձգտին։

Մինչև այժմ կ. Գոլիս ցոյց է տուած, թէ ազգային նշանաւորագոյն խնդրոց վրայ քանի՛ թէթև կը նայի։ Սակայն յոյս կայ, որ երէցփոխանական նոր ընտրութիւնները նոր և թարմ տարրեր մտցնեն երէցփոխանական ժողովոյն մէջ։

Վերջին ժամանակներս հասարակաց կարծեաց մէջ ևս յեղաշրջում մը կը նկատուի յօգուտ գործերու իսկական դրութեան, որ մինչև ցարդ դժուարութեամբ կը քալարկուէր։ Կամաց կամաց դրութիւնս կը պարզուի։

—

Թիֆլիսի գանձարանի գանձապահ օգնական Իլանօվին, ինչպէս յայտնի է, կալանաւորել էին Բիգայում և նրա մօտից գտել 217,000 րուբ., որ նա յափշտակել էր նոյն գանձարանից։ Այժմ այդ վուշն արդէն ուղարկուած և ստացուած է Թիֆլիսում՝ առանձին գործերի դատական քննիչ Դանիլովի հասցէով։

—

ԻԶՄԻՐԻՑ (Զմիւռնիա).—Ահա քանի ժամանակ է, որ Իզմիր կ՚յուզուի 10-ի չափ նոր երէցփոխներ ընտրելու համար։ Հակազգային փոքրագոյն մասը խորդանութիւնք չ՚մնաց, որ գործ չ՚դնէր իւր ընտրելիներն մեծամասնութիւն ստանալու համար և առաջին քուէհամարն ցոյց տուաւ, որ վեց հոգի բացարձակ քուէ ստացած են, որոնց մէջ սպրդած են և հակազգայիններէ քանի մի հոգի։ Ընտրողական ժողովն իսկ նկատելով կեղծում և խարդախութիւնք, չ՚ուզեց շարունակել մինս մնացեալ երէցփոխանաց համեմատական ընտրութիւնը։ Սակայն սա ստոյգ է, որ հզած ընտրութիւնն իրրև նեղգեալ պիտի բեկանի գաւառական ժողովոյն կողմանէ և նորէն պիտի լինի ընտրութիւնը։ Ամբողջ Իզմիր յուզուած է քանի մի սրիկայաբարոյ անձանց գործած խարդախութիւնների վրայ։

—

Ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու անհրաժեշտ պայմաններից մինն եթէ գրքի բովանդակութեան հետաքրքրութիւնն է, մես կողմից պակաս նշանակութիւն չունի—գրքի գինը, նրա տպագրութեան և թղթի մաքրութիւնը։ Պէտք է խոստովանել, որ Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութիւնները մեր մէջ եղած այդ տեսակ հրատարակութիւններից ամենից աւելի նպատակայարմարն են և օգտակարը։ Մինչև վերջի ժամանակներս մեզ յայտնի էին հայ ուսանողների չորս հրատարակութիւնները, որոնց թէ բովանդակութիւնն և թէ գները բոլորովին մատչելի էին ժողովրդին և թէ օգտակար։ Այժմ ստացել ենք նոյն ուսանողների հրատարակութիւններից էլի նոր չորս գրքոյկներ, նոյնպէս մատչելի բովանդակութեամբ և գնով։ Այդ գրքոյկներն են «Մենակեմ գամաղացու պատմութիւնը» (Թարգ. Վ. Կոլօֆկինից, բազկացած է 59 երեսներից և գինն է 5 կոպ.), «Վերջին Դաս» (Ա. Փօնս—Դօդէից, բազ. 12 երես. արժէ 2 կ.,) «Ցինի» (Օստրօգօրսկուց, բազ. 61 երես., գինն է 5 կ.) և «Բօլղարների մասին» (ծանօթութիւն է բօլղարների մասին, բազ. 43 երես., արժէ 5 կոպ.)։ Պէտք է ասել, որ բոլոր մինչև այժմ հրատարակած 8 գրքոյկները աչքի առաջ ունենալով, մարդ գալիս է այն եզրակացութեան, որ բոլորն էլ զիմում են մի որոշ ուղղութեան, որ օգտակար է։ Բայց կարծում ենք, որ մի փոքր էլ հարկաւոր էր բնագիտական գրքոյկներ հրատարակել...։

—

Այս տարի արդէն, կարճ ժամանակամիջոցում, չորրորդ անգամ էր, որ կիսրակի, յուլիսի 3-ին Թիֆլիսի Աէքսանդրեան այգում, ս. Նունէի ուսումնարանի օգտին գրօսանք էր կազմուած։ Այգու մուտքը 20 կոպէկ էր և տոմսակներն, ըստ սովորականին, կանխօրէն ոստիկանների ձեռքով բաժանել էին բնակիչներին՝ որոնց շատերը առնելով տոմսակ, չեն էլ գնում գրօսանքի։ Որովհետև եղանակը լաւ էր, ուստի գրօսանքն բաւական աջող անցաւ. երեկոյեան հրաշալութիւն կար։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ.—Մեր գաւառը այս տարի բաւական կենդանութիւն է ստացել. յուսով ենք այսուհետև աւելի կենդանութիւն պիտի ստանայ։

Ղուբի կողմերը աւազակները շատանում են. բերքերը այս տարի առատ են։

—

Ստացանք «Փչրանք» անունով գրքոյկի I մասը, որ գրել է Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեանցը։ Գրքոյկը տպուած է Շուշի՝ Հայոց Հոգևոր տեսչութեան տպարանում սոյն 1888 թ., մաքուր թղթի վրայ։ «Փչրանք» ընդհանուր անուան տակ պետղուած են հեղինակի գողարկի բանաստեղծութիւնները թէ ոտանաւորով և թէ արձակ, սակայն արձակին էլ ոտանաւոր է։ Մեր գրականութիւնն չափազանց աղքատ է մանկական գրուածքներով. այս փոքրիկ «Փչրանք»-ը, որ նուէր է երեխաներին, կարող է մի պատկառելի տեղ բռնել այդ գրականութեան մէջ թէ իւր սահուն, կանոնաւոր լեզուով, և թէ գաղափարների և մտքերի մանուկներին ուղղին դիւրամատչելի լինելով։ Պատկերները կենդանի են։ Գրքոյկի գինն է 15 կոպէկ։ Այդ գրքոյկը սիրով կարող են կարդալ ոչ միայն մանուկները, այլև մեծերը։

—

«Կարճ» լրագրի ասելով, երկրիս կառավարչապետ իշ. Դօնդուկով Կորսակովը յայտագրով դիմել է պետական սենատի գլխաւոր դրօշմանիշների բաժնին՝ առաջարկելով Ղարսի նահանգի համար առանձին դրօշմանիշ կազմել և ներկայացնել Բարձրագոյն հաստատութեան։

—

Ընդհանուր բերդակալ գեներալ Լէյտենանտ Ն. Ն. Սիլվերցովը ահա քանի ժամանակ է շրջում էր Կովկասում՝ իւր բաժնի վերաբերեալ գրութիւններն երկրի մէջ քննելու նպատակով։ Այժմ արդէն նա վերջացնելով իւր գործը, վերադարձաւ Պետերբուրգ։

—

Բագուի նաւթագործարանատէրերից մինն, տեղական «Kaспій.» թէ թէ ասելով, մտադիր է Սև քաղաքում օճառի մի գործարան հիմնել. ինչպէս հասարակ, նոյնպէս լաւ տեսակի օճառը պիտի պատրաստուի նաւթային մնացորդներից։

—

ԵՆԱՑԻՑ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ *)

(Տպաւորութիւններ)

VI

Վիճակում ստացածս տպաւորութիւններիս յաւելուածը։

Ես մոռացել էի նոյնպէս վիճակի բօրսայի մասին գրել, որ մի այնպիսի երևոյթ է ներկայ քաղաքակրթեալ աշխարհի քաղաքատնտեսական կեանքում, որ արժէր նրան մոռացութեան չտալ, մանաւանդ որ Թերթիս ընթերցողներից շատ քչերին աղոտուած կը լինի այսպիսի հիմնարկութիւնները տեսնելն ու նրանց կեանքին ծանօթանալը։ Աւստրիայի հռչակաւոր մայրաքաղաքի այս հիմնարկութիւնն առևտրական թանգարանի շինութեան մէջն է և մի շատ բարձր ու ընդարձակ սրահ է ներկայացնում։ Ցատակի վրայ մէջ տեղում չինուած են երկու զուգահեռական նեղ սեղաններ, իսկ շուրջը կամարների տակ փոքրիկ բաժանմունքներ հանգստանալու և ուտել խմելու համար։ Երկրորդ յարկը, որ շատ բարձր է, մի նեղ շրջագայող պատշգամբ է հանդիսականների համար, որոնք պարտաւոր են մուտքի համար վճարելու։ Ներքևի լրատունք ունեն մնալու միայն անդամները։ Եթէ այցելուն չգիտենաս, թէ այս ինչ հիմնարկութիւն է և գործի եռ եկած ժամանակ նայէր ներքեւում գործողներին՝ անշուշտ պիտի կարծէր, որ սա անպատճառ մի գործանոց պիտք է լինի։ Անդամները ժամի 10-ից սկսած՝ հաւաքվում են և քանի գնում, խօսակցութիւններն այնքան ևս տաքանում է։ Մի ժամ էլ է անցնում, և ահա հարիւրաւոր՝ մեծ մասամբ ցիլինդրաւոր մարդիկ իրար անցան, այնպէս գոռում գոչում բարձրացրին, որ կարծես հենց այս է՝ աշխարհիս վերջն է։ Աստեղ վաճառվում են, ինչպէս յայտնի է, թղթադրամներ և արժեթղթեր. այնպէս օրեր եղան, որ օրինակ՝ ռուսական թղթադրամները 100-ին 2—3 բարձրանում կամ ընկնում էին. երեւակայեցէք այն դրամատէրերի հոգեկան դրութիւնը, որոնք 10,000—100,000-ներ ունէին։ Ի հարկէ ռուսական թղթադրամի վաճառման գլխաւոր հրապարակն այսօր Բերլինն է, որովհետև գերմանական դրամատէրերը ամենից շատ են գնել այս թղթերից, բայց չէ որ Աւստրիան էլ ունի իւր փոփոխական արժողութիւն ունեցող թղթադրամներն ու ազգային և տասը արժեթղթեր։ Մինչդեռ բօրսայի գործը հետզհետէ տաքանում է, Բերլինից և այլ տեղերից բազմաթիւ հեռագիրներ են թափւում. հենց որ այս կամ այն թղթի մասին լուր են ստանում, կատաղի գոչումներով վազում են այն անձնաւորութիւնների մօտ, որոնք այդ թղթերն ունին և չիշատակարանները ձեռքերին մէկ բզաւում են, մէկ նշանակում գնածն ու վաճառածը։ Աւստ են, որ այս բօրսայի անդամները մեծամասնութիւնը հրէաներ են. սրանք իրենց կիրքը մինչև այն աստիճանի են հասցնում, որ կարծես մի մեռեանց խեղդել կամ ուտել են ուզում։ Այս մի խմբում գործը վերջացաւ, ահա մեծամասնութիւնը հեռանում է մի այլ մարդկի գլխին թափւելու, ապա հետզհետէ հանդարտում են և առևտուրը մի քիչ հանգիստ է առնում։ Ահա մի նոր լուր և կրկին աղմուկ, աղաղակ, ուրախութիւն և յուսահատութիւն։ Ես իմ կեանքումս այսպիսի բան չէի տեսել։ Այստեղ երազիկ եղայ, թէ քաղաքական կեանքի իւրաքանչիւր աննշան շարժումը ինչպիսի անպատում ալիքներ է յարուցանում տէրութիւնների տնտեսական կեանքում։ Այս տնտեսական կեանքի ահարկու պատերազմը մեծ սարսափ է ձգում և նրա վրայ, որ շատ ապրանք կամ գումար ունի, և նրա վրայ, ով ոչինչ չունի։

Աւստրիայի մայրաքաղաքը հարկաւ ներկայացնում է այս երկրի տագնապները և ուրախութիւնները կենդրոնացած ոյժերով։ Քանի մեծ է մի քաղաք, այնքան և առաւել շատ և բազմապիսի են նրա անդադրութեան և բաւականութիւնների վայրերը։ Ուրախ վիճակին գիտէ յաճախ մոռանալ առօրեայ հոգսերը և դիմել զուարճալի տեղերը, և ահա հռչակաւոր պատէրը իւր դիւթական ոյժով մանաւանդ կիրակի օրերը՝ հրապուրում է հազարաւոր մարդիկ, որոնց իւրաքանչիւրը դաստակարգը գտնում է իւր սրտին ու հոգուն մօտ առարկաներ՝ ցիրկեր, աշքակապներ, կարուսելներ, կենդանանոցներ, կօնցերտ, թատրոն և հազար ու մէկ զուարճալիքներ։ Այս խաժամուժ կեանքից մի ընդհանուր տպաւորութիւն ստանալուց յետոյ՝ մեր ուշադրութիւնը առանձնապէս գրաւեց այստեղի ամրակոծման պանօրամը։ Ես պանօրամներ քիչ չէի տեսել, բայց վիճակի այս հիմնարկութիւնը գեղարուեստի մի հրաշալիք է։ Դիտողը բարձրանում է գլանաձև պանօրամայի մէջում կառուցած պատուանդանի վրայ և չանկարծ իւր առաջ սփռուած է տեսնում աշխարհահռչակ Պարիզը իւր չքնաղատեսքով։ Մարդ իրեն չքնաղատուած է տեսնում մայրաքաղաքի բլրակներով, պարտէզներով ու արուարձաններով, և հեռուից հրևում են քաղաքի կինդրոնական հրաշալի շինութիւնները։ Տեսարանը շատ սարսափելի է։ գերմանացիք արդէն քաղաքի արուարձաններումն են և հալածում են Փըրանսիացիներին. վերջիններս դեռ բոլորովին անձնատուր չեն եղել և կամենում են դեռ որքան ոյժ կայ իրենց մէջ, կռուել ու այնպէս յաւերժանալ։ Շատ տներ, ալիները, պարտէզները քայքայուած և այրուած են, տակաւին շատերի լուսամուտներից ու կտուրներից հրդեհի ծուխը բարձրանում է, իսկ բնակիչները ամենևին չեն երևում։ Թէև իւրաքանչիւր րոպէ զգում ես, որ վիճակի հողի վրայ ես կանգնած՝ բայց և այնպէս հենց որ աչքերդ այդ տեսարաններն ես դարձնում, իսկոյն հիշարկվում ես աչքախաբութեան ազդեցութեանը, վասն զի հմուտ գեղարուեստ-վարպետը իրականութիւնը պատկերի հետ այնպէս է միացրել, որ որքան էլ ձիգ թափես, չես կարող ասել, թէ ուր է մինը ընդհատվում և միւսը սկսվում։ Անմիջապէս ոտքերիդ տակը վայր են ընկած թնդանօթներ, պայուսակներ, մի քիչ հեռու՝ մի քայքայուած պա-

*) Տես «Նոր-Դար» № 106.

տի աւերակները, սրա վրայ թափթփուած ու ջախջախուած սիւներ, այնտեղ մի կոտրած տախտակ։ Սակայն այս ինչքա՜ն են. դեռ իրական իրերն են, թէ պատկերն է։ Չգիտես, ուստի իսկոյն հարցնում ես ընկերներից, յուսալով, որ գոնէ նրանցից մէկին ու մէկը քեզ այս իլլիւզիայից ազատել կարողանայ։ Բայց ինչ ես լսում. ինչպէս քո ընկերակիցները, նոյնպէս էլ վիննացիք վէմէ են կանգնել և իւրաքանչիւրը իրականութեան սահմաններն ըմբռնելիս իրականութեան սահմաններն են ընդունում։ Ես ինձ ոչ մի կերպ չեմ տեսել աշխարհահռչակ պատկերներ, դիտել եմ և սրանց այցելուներին. վերջիններիս շատ քչերն են կանգ առնում և խորասուզվում այդ հրաշալիքների ներքին կեանքը, քչերն են կարողանում նկարչի գեղարուեստական արտադրութիւն է, որ նրանով չափչափվում է ամեն աստիճանի զարգացողութեան տէր մարդը։ Այս հոգեկան երևոյթը դժուար չէ բացատրելը. կլասիկական պատկերները հասկանալու համար անհրաժեշտ է նախ նկարչի բարձր գաղափարներն ու իդէալները ճանաչել, իսկ պանօրամ կառուցանող գեղարուեստը օգուտ քաղելով փիզիկական իլլիւզիայի ազդեցութիւնից, ձիգ է ծախսում, որքան հնարաւոր է, արուեստականը միայն իրականին մօտեցնելու։

Վերջապէս երկու խօսք էլ վիննացի ձիարշաւի մասին։ Ես զէպք ունեցայ հանդիպելու տարուայ այս հանդիսի սկզբին, որ գարնանամուտին է լինում։ Զնայելով, որ օրը շատ ցուրտ էր և եղանակն անախորժ, բայց և այնպէս ուրախ վիննացիների հպարտաբուններին դժուար էր այս բաւականութիւնից զրկուելը։ Եւ ահա շոգենաւներով ու կառքերով կուտակուեց մի ահագին բազմութիւն զուարճասէր մարդիկներից, որոնք անհամբերութեամբ ձիաներին էին սպասում։ Մինչ այս մինչ այն՝ հարիւրաւոր մարդիկ, սկսած մեծատուններից մինչև մանրավաճառներն ու չքաւորները՝ պատմական կամ մասնաւոր կիրպիչ գրագներ են դնում այս կամ այն ձիու վրայ։ Մի քանի տեղ երաժշտութիւն է, ուստում խմում են, բայց և այնպէս բոլորի աչքերը ձիաների կողմն են։ Վերջապէս եկաւ կայսերական տան անդամներից մէկը, երաժիշտները սկսեցին կայսերական հիմնը և կրկին սկսեց շրնչը, որ քանի գնում, բարձրանում և ազմուկի էր վերածվում։ Նայիր, հէյն, հէյն, ահա կապուտաչ, ահա իմ կարմիրը *), ապա, տեսնո՞ւք և ահա դատաւորները բարձրացան, դիտանոցը, հեռադիտակներն ուղղեցին դէպի ձիաւորները, որ երկու կամ երեք են լինում, գանգակները հնչեցին և մրցումը սկսուեց։ «Պո՛ւհ, պա՛ւհ, պա՛ւհ», իւրաքանչիւրը հարիւրաւոր գրազատէրերից գովասանում է իր ձիուն ու կարծես սիրտ տալիս, «այ զօշաղ, անցաւ, անցա՛ւ. վա՛յ, վա՛յ, իմը ետ ընկաւ»։ Այսպիսի բազմաթիւ բացականչութիւնները այնպէս են միմեանց հետևում, որ նրանց ամբողջութիւնն իւրաքանչիւր անգամ միմեանց շատ նման են լինում և իրենց էլէկտներով այնպիսի տպաւորութիւն են գործում, ինչպիսին ամպերի գոռգոռոցը իրենց վերջնակէտ չանթահարութեամբ։ Հանդիսականներից շատերը այս գործը իրենց մի տեսակ ապրուստի միջոց են դարձրել և այսպէս իւրաքանչիւր անգամ շատերը ուրախ սրտով, շատերը տխուր

*) Ձիաւորների հագուստները զանազանելու համար զանազան գոյնի են լինում։

և գլխիկոր տուն են վերադառնում, անհամբերութեամբ հեռանալ ձիարշաւին սպասելով։

Ե. Տէր-Միքայէլ։

(Կը շարունակուի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Վիննայում հրատարակուող «Corresp. de L'Est»-ը հաղորդում է հաւատալի աղբիւրներից, որ իշ. Բիսմարկի օրգնի՝ գրաֆ Բիսմարկը պատի ընկերակցի Վիլհելմ կայսրին՝ նրա Պետերբուրգ ուղևորելու մէջոցին։ գրաֆ Հերբերտ Բիսմարկը պէտք է կայսրի մօտ վերադառնայ նոր հօր՝ կանցլեր իշ. Բիսմարկին։

—Գերմանական թերթերի ասելով, Վիլհելմ II կայսրը յուլիսի 1-ին կը ուղևորուի յետոյ, 6-ին պատի հասնի Պետերբուրգ։ Նրան պատի ուղեկցեն արտաքին գործերի պետական քարտուղար գրաֆ Հերբերտ ֆոն-Բիսմարկը, գեներալ-ադիւտանտ ֆոն-Վիտտենհոֆը, մի քանի ֆլիգել-ադիւտանտներ և ռուսական զինուորական գործակալ Գոլենիշչեվ-Կուտուզով։ Կայսերական ուղեկիցներից մնացածներն յուլիսի 3-ին դուրս կ'գան երկաթուղով Պետերբուրգ։

—«Kölnische Zeit.»-ը հրատարակել է մի թղթակցութիւն Բերլինից, որի մէջ կիսապաշտօնական կերպով հաղորդուած է Գերմանիայի ներկայ դրութեան մասին։ Աւստրիա-Իտալիայի հետ ունեցած դաշնակութիւնն լիովին բաւական է, ասում է Թերթը, որ ապահովուած լինէն Գերմանիայի շահերը, և նրա դրութիւնն հաստատելու համար ոչ մի նոր պայմանի կարևորութիւն չկայ։ Սակայն Գերմանիան պատրաստ է քաղաքական դրութիւնից հեռացնելու այդ ամենը, ինչ որ պատճառ կարող է դառնալ իր դաշնակիցներից մինին ընդհարման եւրոպական միւս պետութիւնների հետ։ Որովհետև Աւստրիայի իւրաքանչիւր պատերազմը կարող է դառնալ պատերազմ և Գերմանիայի համար, ուստի խաղաղ քաղաքականութեան հակառակ կը լինէր, որին ահա 18 տարի է հետևում է Գերմանիան, եթէ ամեն մէկից գործ չդնէը Աւստրիայի և Ռուսիայի մէջ պատերազմ ծագելուն խանգարելու համար։ Այդ կողմից գերմանական և ռուսական տների ազգակցական կապերը մեծ նշանակութիւն ունին։

ՍՊԱՆԻԱ.—Մինիստրների խորհրդում մինիստր-նախագահ Սագաստան յայտարարել է, որ բանակի մէջ ընդհանուր դժգոհութիւն կայ մի քանի բարեփոխութիւններ չհատարուելու պատճառով, ուստի հարկաւոր է, որ շուտով ձեռնարկուի այդ բարեփոխութիւններին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Շաբլ Գունօն և Ալֆոնս-Դօդէն Բուլինիայի Թագուհուց հրաւէր են ստացել այս ամառ իրեն այցելելու, Սինայում Պալէհան ամրոցը, որ գտնվում է կարպատեան սարերի ամենագեղարուեստական և ամենավայրենի վայրերից մինում։

*** Հարաւ Աբեմատեան Ֆոսֆորիտում, Փ'էլիսակ կոչուած տեղում գտել են մի գօտի, որի ծանրութիւնն հասնում է 29 կիլօգրամի (մօտ երկու պուդ), պոչի արմատից մինչև գլուխը՝ 67 սանտիմէտր (սանտիմէտրը=0,394 դիւմ) երկարութիւն ունի, իսկ չրջապատն է 62 սանտիմէտր։ Այդ հիւթաւորը գօտին ձայնը նման է չան հնչուն։ Գօտը 1,725 ֆրանկով ծախել են Սէնա Էլենի հարուստ արդիւնագործողներից մինին։

*** Ֆրանկֆուրտում հրատարակուել է «Staat und Kirche» վերնագրով մի գիրք, որ լաւ ուսումնասիրում է եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները։ Գրքի հեղինակութիւնը վերագրում են Անգլիայի Վիկտորիա թագուհուն։

*** Առաջիկայ 1889 թուին Պարիզում կայանալիք համաշխարհային ցուցահանդէսի համար, երկու յայտնի աշխարհագէտներ պատրաստելու են մի ահագին գլոբուս, որի շրջապատը կը լինի 40 մետր։ Այդ աշխարհագունդը, երկրիս նման, պէտք է շրջան առնէ առանցքի վրայ, իսկ վրան նկարած պիտի լինին բոլոր պետութիւնների քարտէզը քաղաքական, Ֆիզիկական, տնտեսական և այլ կողմերից։ Այդ հսկայն աշխարհագունդի շուրջ պիտի շինուին նստատաններ, այնպէս որ, բոլոր ցանկացողները պիտի կարողանան առանց իրենց տեղից շարժուելու ճանապարհորդել ամբողջ երկրիս երեսին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

ԿՐՕՆՇՏԱԴՏ, 4 յուլ.—Ցերեկուայ ժամը 4½-ին ծովից եկաւ կայսերական «Յարեվնա» շոգենաւը Թագաւոր Կայսրի դրօշակով։ Նաւահանգիստում կանգնած նաւերից ոչխարի տուին։ Կրօնշտադտի մօտից անցնելով, նաւը ուղղակի Պետերհօֆ ուղևորեցաւ։ Այդ գիշերն և այս առաւօտ Կրօնշտադտեան նաւատորմղի այն բոլոր նաւերը, որանք նշանակուած են գերմանական կայսերական նաւախմբին ընդունելու։ Ռուսական նաւերը պետեղուեցան գեներալ-ծովակալի կարգադրութեան համաձայն։

ՎԵՆՆԱ.—Նատալիա թագուհին այսօր ուղևորում է Պարիզ, ուր մտադիր է մնալու մինչև իր գործի վերջանալը. սակայն կսրոշ է պատահել, որ թագուհու ուղևորութեան նախագիծը փոխուի։

Նատալիա թագուհին երէկ իր մօրաքրոջ՝ իշխանուհի Մոնրոզի հետ ներկայ էր ռուսական դեսպանական եկեղեցու ժամասացութեան, ուր հաւաքուած էին 150 հոգի, մեծ մասամբ այստեղ ապրող հարուստ սլաւեանների։ Եկեղեցի գալիս, սերբիական թագուհուն ողջունեց իշխան Լոբանով-Րոստովսկին, իսկ երբ նա դուրս էր գալիս եկեղեցուց, լսուեցաւ «ժիվիօ» բացականչութիւններ։ Ծառայից յետոյ թագուհին ընդունեց իշ. Լոբանով-Րոստովսկուն։

Այստեղի թերթերից մինը հաղորդում է, որ պրինց Կօբուրգի դրութիւնը Բոլղարիայում ծանր վտանգ է սպառնում. Պօպովի գործը պետական տագնապի կերպարանք է ստացել. սակայն, հարցրն արդէն ուղղակի է դրուած՝ կամ Կօբուրգեան պրինցը պէտք է լինի և կամ Ստամբուլովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յուլ.—«Journ. de St.-Pétersbourg»-ը հաղորդում է, որ գերմանական կայսրին Պետերհօֆում սպասում են յուլիսի 7-ին, ճաշից յետոյ ժամը 3-ին։ «Այս քաղաքավարական նշանի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՄԱՏԹԷՈՍ Ա. ԱԽՈՒՄԵԱՆՑ

Ընդունում է առաւօտեան ժամը 8-ից մինչև 10-ը, երեկոյեան՝ ժամը 4-ից—8-ը։

Գօլովինսկի, տուն Դօբրժանսկու։

3—3

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ, որ դասախօսել է Հայոց միջնակարգ ուսումնարաններում և ունի Ս. Էջմիածնի ձեմարանի մրցանագիր (դիպլօմ), ցանկանում է ուսուցչութեան պաշտօն վարել Հայոց ուսումնարաններում։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող բոլոր առարկաները։ Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

(Ս.) 8—8

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցում, կամենում է գաւառներ գնալ ուսուցչութեան պաշտօնով։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող առարկաները. բայի այդ աշղակ կերպով պատրաստում է երգեցիկ խումբ։ Հասցէն. Тифлисъ. Левону Меликъ-Адамянцу, Большая Грязная ул., д. № 17. յանձնել Պ. Վ.-ին։

6—6

Մարմնի մասերը, մանաւանդ ոտի մատների փուտկի դէմ

ԳԱՅԼՄԱՆԻՆԸ

Ծախվում է դեղատներում, նոյնպէս և դեղավաճառների մօտ Եւրոպայի նշանաւոր և Ռուսիայի բոլոր քաղաքներում։ Գլխաւոր դէպօն գտնվում է Վարշավայում՝ հնարոդի մօտ, դեղատնատիրոջ, Փարմացեայի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլէքտօրայնայա փողոց, № 31։ Մեծ առուվով Գայլմանինը վաճառվում արժէ 50 կոպէկ, փոքրը 30 կոպէկ։

ՊԷՏՔ Է ԽՈՅՍ ՏԱԼ, ԿՆԴՏԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր տուփի վերայ գտնուի գործակատարների բացատրութիւնն ու Պարիզի ցուցահանդէսի մեդալները։

(Մ. 40,700) 10—10

ПАРФЮМЕРІЯ
ВЫСШАГО КАЧЕСТВА
А. СІУ и К°
МОСКВА
НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(Մ.) 50—8

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբօրատօրնայա փողոց, № 11)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրիաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 15-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովինարների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնուղի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Учредителю курсовъ С. И. Манукьянцу.

5 1

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Іюля 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկոյի

Типографія Л. Г. Крамаренко. Гол. пр., д. Читахов

ՆՈՐ-ԴԱՐ

№ 109 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 7 Յուլիսի 1888 Հինգշաբթի 7 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 109

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Համար՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչ 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

Ծնողք Յովհաննէս և Թալիա և եղբարք—Գաբրիէլ, Բագրատ և Պետրոս Ալիբէկեանցները ցաւօք սրտի յայտնելով առաջիններս իրենց որդւոյ և վերջիններս՝ իրենց եղբօր՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱԼԻԲԷԿԵԱՆՑԻ մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին ներկայ գտնուել ննջեցեալի յուղարկաւորութեան հանդիսին, յուլիսի 7-ին, հինգշաբթի օրը, տասը ժամին առաւօտեան Մողնու. Սուրբ Գէորգ եկեղեցին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Քաղաքական աշխարհից։
Քրոնիկոն—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Հին-Նախիջևան։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Եկեղեցական հաշիւ Ս. Թարգմանչաց վանքի (Գանձակի գաւառում)։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 6 յուլիսի 1888։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Գերմանական կայսր Ֆրիդրիխի մահուանից յետոյ քաղաքական աշխարհում տեղի ունեցող դէպքեր չեն պակասում, որոնք աւելի կամ պակաս չափով դարձնում են իրենց վրայ ընդհանուրի ուշադրութիւնը և բաւականին առատ նիւթ են մատակարարում անյագ մամուլին։

Կան դէպքեր, որոնք ըստ ինքեան քաղաքական տեսակէտից գրեթէ նշանակութիւն չունին, բայց հետաքրքրական են և իրենց հետևանքներով կարող են եթէ ոչ ընդհանուր գէթ մի որոշ տեղի քաղաքական դրութիւնը զանազան փոփոխութիւնների ենթարկել և աւելի վտանգաւոր դրութիւններ առաջացնել։ Այսպէս Բուլանժէի մենամարտը Ֆրանսիական մինիստրութեան պետի՝ Ֆլոկէի հետ հետաքրքրական է։ Ֆրանսիական երկրի բարքին ու վարքին անծանօթ արևելցին պիտի զարմանայ, թէ ինչպէս մինիստրութեան պետը կարող է թէ երկրի գործերի կառավարիչը լինել և թէ մենամարտել, քանի որ մենամարտութիւնը օրէնքով պէտք է որ արգիլուած լինէր, օրէնք՝ որի դէմ մեղանչողը այդտեղ առաջին մինիստրն է հանդիսանում։

Եթէ մենամարտի մէջ Բուլանժէն սպաներ, ինչ կը լինէր դրա հետևանքը. հաստատ է, որ բուլանժէական կոմեդիայի վերջը կը լինէր։ Իսկ եթէ Ֆլոկէն սպաներ, այն ժամանակ դժուար է ասել, թէ ինչ կը լինէր, որովհետև մինիստրութիւնը պետին կորցնելով, կը հրաժարուէր և երկրի կառավարութիւնը նոր ճգնաժամի մէջ կը ձգէր։

Այդ դրութեան ծանրութիւնը իմանալու համար պէտք է յիշել այստեղ ֆրանսիական ազգային ժողովը, որի անդամների գլխաւոր զբաղմունքն է եղել մինչև վերջերս նոր մինիստրութիւններ ստեղծել և եղածները կործանել, այնպէս որ ֆրանսիական հասարակապետութիւնը մի որևէ է քիչ շատ հեղինակութիւն ունեցող և դիմացկուն մինիստրութիւն կազմելու համար էլմարդ չունի։ Ֆրանսիական երրորդ հասարակապետութիւնը իր ունեցած քիչ շատ նշանաւոր մարդկանց բոլորին բանեցրել է. մէկ Ֆլօկէ էր մնացել, նրան էլ կը բանեցնեն և շուտով կը հնացնեն։

Հանգուցեալ կայսր Ֆրիդրիխի կարճատև կայսրութեան միջոցին՝ երբ խօսքը գալիս էր այժմեան կայսր Վիլհելմի վրայ, ընդհանուր այն կարծիքն էին յայտնում, որ Վիլհելմը աւելի զինուոր է քան պետական մարդ, պատերազմասէր է և եթէ նա գահը բարձրանայ, պատերազմը անխուսափելի է։

Կայսր Ֆրիդրիխի խաղաղասիրութիւնը փառաբանելով շատ նշանաւոր թերթեր անուղղակի կերպով հարուածում էին իշխան Բիսմարկին՝ հասկացնելով, որ Ֆրիդրիխի կայսերութեան միջոցին նրա ամենակարողութիւնը խիստ սահմանափակուած է, ուրեմն և եւրոպական խաղաղութիւնը ապահոված։ Երիտասարդ Վիլհելմ կայսրը բազմելով գերմանական կայսերութեան գահը, իւր խաղաղասիրական քաղաքականութեամբ սուտ հանեց իւր մասին յայտնած կարծիքներն և արած գուշակութիւնները։ Նա իւր մանիֆեստներում և պարլամենտի բացման առթիւ խօսած ճառում ցոյց է տալիս, որ Գերմանիան ուժեղ է և պատերազմելու ահագին միջոցներ ունի, բայց չէ կամենում այդ ոյժերը գործ դնել, այլ կամենում է իւր պապի և հօր ճանապարհին հետևել և որքան իրենից է կախուած պահպանել ընդհանուր խաղաղութիւնը։ Երիտասարդ կայսրի խաղաղասիրական քաղաքականութիւնը աւելի աչքի պէտք է ընկնի նրա համար, որովհետև նա յայտնի է իբրև իշխան Բիսմարկի քաղաքական հանճարի երկրպագու, որին՝ հակառակ կայսր Ֆրիդրիխի՝ կարծում էին, որ խաղաղութեան պահպանելուն դէմ է։ Այդ տեսակէտից գերմանական երիտասարդ կայսր Վիլհելմի կայսր Ալէքսանդրին անելիք այցելութիւնը շատ նշանաւոր է իբրև խաղաղասիրութեան փառաւոր ցոյց։

Արդարև, եթէ Գերմանիան և Ռուսիան միմեանց հետ հաշտ և համաձայն լինին, դա ընդհանուր խաղաղութեան ամենալաւ ապահովութիւնն է։ Այդ այցելութեան խնդիրն է, որ այսօր եւրոպական մամուլին զբաղեցնում է և իւրաքանչիւր թերթ իւր տեսակէտից քննում է այդ այցելութեան նշանակութիւնը և տալիս է իւր մեկնութիւնը։ Նշանաւորը այդ այցելութեան մէջ այն է, թէ արդեօք դա ապահովացնում է եւրոպական խաղաղութիւնը թէ ոչ։

Ահա խնդիրը։ Անտարակոյս, երկու մեծ պետութիւնների պետերի բարեկամական այցելութիւնները նպաստում են խաղաղութեանը և հաստատ այսքանս կարելի է ասել, որ առաջիկայ ամիսներում ընդհանուր խաղաղութիւնը չի խանգարուիլ։ Բայց սպառած պատերազմի վտանգը հեռացնելու համար հարկաւոր է ի նկատի ունենալ նախ այն, որ այժմս պետութիւնները իրենց շահերովն են զեկավարվում և ոչ թէ ազգակցական և բարեկամական զգացումներով, երկրորդ այն, որ ինչպէս միւս պետութիւնները, նոյնպէս և Ռուսիան և Գերմանիան իրենց շահերը չեն զոհիլ, երրորդ այն, որ Ռուսիան բօլղարական խնդրում ցոյց տուեց, որ շատ է գնահատում խաղաղութիւնը, բայց իւր էական շահերից ձեռք վերցնելու ամենևին մտադիր չէ։

Այս ամենից ընթերցողը կարող է այն եզրակացութեան գալ, որ խաղաղութիւնը կատարելապէս կապահովուի այն ժամանակ միայն, երբ մեծ պետութիւնների շահերը միմեանց դէմ չլինին, այլապէս՝ երբ դրանք միմեանց հետ համաձայնութիւն կայացնեն իրենց շահերի վերաբերութեամբ։ Հասարակ ընթերցողին աւելի հասկանալի լինելու համար օրինակով խօսենք։ Ֆրանսիական և գերմանական կառավարութիւններն որքան էլ որ սիրով լինին միմեանց հետ, այնու ամենայնիւ ընդհանուր խաղաղութիւնը այն ժամանակ է միայն ապահովուած, երբ Գերմանիան վերադարձնէ Ֆրանսիային այնքան փառաւոր յաղթութիւններով ձեռք բերած Էլզաս-Լօթարինգը, կամ թէ Ֆրանսիան ձեռք վերցնէ Էլզաս-Լօթարինգից և վրէժխնդրութեան քաղաքականութիւնից։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Արաքս»-ը հաղորդում է, որ նկարիչ Այվազովսկին թէոդոսիայում նկարելու է Մասիս սարը։

—1880 թուին Հայաստանում պատահած սովի միջոցին ըստ եւրոպական վիճակագրութեան աղբակի մէջ մեռել են 150 հոգի, Վանի մէջ—400 հ., որոնցից 100-ը երիտասարդ և 300-ը մանուկներ են։

—Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխանորդ Թաչատուր վարդ. Կարապետեանցը ցանկութիւն ունի Ջուղայում հաստատել բարեգործոյն մի ուսումնարան, որի համար նա նուիրելու է 400 օսմ. ոսկի և մի գիւղ Ջուգրա անունով Ջուղայից 24 ժամ հեռու, որ արժէ 1000 ոսկի և որը տարեկան բերում է 150 օսմ. ոսկի. ընտրուած է հինգ հոգուց կազմուած մի հոգաբարձութիւն։ Բիւրմանիայի, Հնդկաստանի հայերից նոյն նպատակի համար հանգանակած է 1200 օսմ. ոսկի։ Բոլորը միասին տարեկան կը բերէ 300 օսմ. ոսկի։ Բատաւիայի հայերը խոստացել են ամեն տարի կանոնաւոր նուէրներ տալ։

—

Անցեալ անգամ հաղորդել էինք, որ Անդրկովկասեան մահմեդականների Շէյխ-ուլ-իսլամ Ախունդ-Միրզա-Հասան Թալիշն ուղևորեցաւ Երևան՝ իւր հովանաւորութեան յանձնուած հօտի գործերը քննելու համար։ Այժմ իմանում ենք, որ նա նպատակ ունի և մի քանի տեղ, ուր որ հնարաւոր կը լինի, բանալու ռուս-թուրքական ուսումնարանները և պիտի առանձին ուշադրութիւն դարձնէ, որ ղազիները ծրննդական գրքեր պահեն կանոնաւորապէս։

—

ԳՈՒՐՋԱՆ գիւղից (Աշնակի գաւառում).—Այս գիւղի եկեղեցին փտած փայտից լինելով, Թեմիս ս. Առաքելոց 1883 ին այստեղ եկած ժամանակ, Սիմէօն Մելիք-Նուբարեանց ցանկութիւն յայտնեց նոր, քարաշէն եկեղեցու շինութեան ձեռնամուխ լինելու, սրբազանի յորդորանքը լսելով և նրա օրհնութիւնը ընդունելով։ Այժմս այդ պատուոյ աշխատութեամբ և գիւղի ժողովուրդի նուիրատուութեամբ կառուցուած կանգնած է քարաշէն Ս. Սարգիս անունը կրող եկեղեցի։

—

«Նոր-Դար»-ի նախընթաց համարներից մինում հաղորդել էինք, որ Բագուից եկող երկաթուղու գնացքից յափշտակել են պօստային գումարների մի մասը։ Պօստային վագոնը կցած է եղել չոգեմեքենային, իսկ նրա եանկից մի ուրիշ բաժին՝ չեր վագոն, ուր զետեղուած են եղել պօստային արկղների մի մասը՝ պօստային վագոնում տեղ չլինելու պատճառով։ Փոդերը գողացել են Ազստաֆայի և Թիֆլիսի մէջ և տարել են 5503 ր. 67 կ., մի կողմ թողնելով 160,000 րուբլու ծրարը։ Կասկած կայ ծառայողների վրայ. կալանաւորուած են երկու հոգի, որոնք յափշտակութիւն պատահելուց մի փոքր առաջ արձակուած են եղել պաշտօնից։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Տեղիս ուսումնարանի կառուցման մասին հաւաքուած է բաւական մեծ գումար, անցեալ յունիս ամսի 25-ից սկսած չարունակվում է ուսումնարանի վերաշինութիւնը։

—Վերջին ժամանակներս մեզանում աւելի և աւելի զգալի են լինում չոգերը, որից և առաջանում են զանազան հիւանդութիւններ, մանաւանդ փոքրահասակների մէջ։ Սաստիկ տարածուած է «կապոյտ հազ» ասուած հիւանդութիւնը, որից մօտակայ գիւղերում շատ զոհեր են լինում։ Այս թշուառութեան առաջն առնելու համար գործ են ածում զանազան տեսակ դեղեր։ Մօտակայ «Թազագիւղ» անուանեալ քաղաքարաժնում հնարած են բժշկութեան համար մի զարմանալի եղանակ։ Ծակում են աղբը, որի մէջից հիւանդներին անց են կացնում, չնայելով որ դրանցից ոչինչ օգուտ չէ հասնում հիւանդին։

—

Քաղաքիս ջրկիրների գործ դրած անիրաւութիւնների մասին շատ անգամ է գանգատներ լսուել, բայց ոչ մի գործնական միջոց չէ գործադրուել դրա առաջն առնելու համար։ Սակայն դեռ քաղաքիս պ. քաղաքագլուխը 1886 թուին դիմել էր պ. նահանգապետին խնդրելով, ջրկիրների համքարութիւնն հանելով արհեստաւորների վարչութեան իշխանութեան տակից յանձնել քաղ. վարչութեան և քաղաքային օստիկանութեան հսկողութեան. նահանգապետի վարչութիւնն չհամաձայնելով դրան, թողնել ջրկիրներին կրկին արհեստաւորների վարչութեան տակ, բայց պ. նահանգապետը վնասակար համարելով ջրկիրների համքարութիւնն, յանձնարարեց դիմել երկրիս պ. կառավարչապետին և խնդրել, որ այդ համքարութիւնն բոլորովին ոչնչացնուի։ Իր. կառավարչապետը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս թերթերը, համաձայնել է պ. նահանգապետի կարծիքին։

—

ԽԱՆՔԵՆԴԻՒ տեղի հայոց եկեղեցու երէցփոխ Աւագեկ Մելքումեանցը մեզ խնդրում է հրատարակել.—Ընթերցող հայ հասարակութեանն յայտնի է Խանքենդ աւանի եկեղեցու Թշուառ դրութիւնը։ 7 տարի այդ եկեղեցին թերի մնալով, անցեալ տարի լրագրութեան միջոցով հրատարակեցի, որ ամեն մի հայազն բարեգործ լրատուութիւն ունի եկեղեցու թերին լրացնել և եկեղեցու դրան Խաչկատն իւր չքշատակը յաւերժացնելու համար արձանագրութիւն փորագրել տալ։ Թէև մի պարոն յանձն էր առել այդ թերին լրացնելու, բայց մինչև այսօր գործը «այսօր-վաղը» ձգելով, այժմ միանգամայն հեռացել է իւր մտքից։ Եկեղեցին դարձեալ նոյնն է, ինչ որ 7 տարի սրանից առաջ։ Ի հարկէ, եթէ չիշեալ պարոնը յանձնառու չլինէր, և գործին չմիջամտէր, ինչպէս լսել ենք, եղել են շատերը, որոնք մեծ ուրախութեամբ յանձն կառնէին—եկեղեցու թերին լրացնել։ Այսօր Խանքենդի հայ հասարակութիւնը նորից ժողով կազմելով վճռեց եկեղեցու պատրաստի 160 րուբլին, Բագուից ստացած 500 ր. և զանազան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Լ. Փ.

Ահա՛ ևս մեկը, մեծ մեղքի ևս մեկը, նախկին մեղքերի վրա ավելացած... Ես խոսում եմ Ալեքսանդրապոլի ազգաբնակության մասին, որ ամբողջ ձմեռը ցրտից ու սովից մեռնելու վրա էր, և որին ոչ ոք չէր ուզում օգնության հասնել։ Ես խոսում եմ Ալեքսանդրապոլի ազգաբնակության մասին, որ ամբողջ ձմեռը ցրտից ու սովից մեռնելու վրա էր, և որին ոչ ոք չէր ուզում օգնության հասնել։ Ես խոսում եմ Ալեքսանդրապոլի ազգաբնակության մասին, որ ամբողջ ձմեռը ցրտից ու սովից մեռնելու վրա էր, և որին ոչ ոք չէր ուզում օգնության հասնել։

մինն է կազմում նախընթաց տարինների կազմուած պարտքերը, երբ հողի վճարը շատ բարձր էր նշանակուած։ Պարտապան ագարակավարձը կարող չէ հողի վարձի չափը որոշող դատարանին դիմել, որովհետև նրան սպառնում են արտաքսել ագարակից։

4) Հազարաւոր ագարակ վարձողները չեն կարող դիմել դատարաններին և որոշեալ ագարակավարձը նահանջելու մասին խնդրել, որովհետև նրանց արդէն յայտարարուած է, որ հողատէրը կարող է երբ որ ուզէ նրանց գուրս անել ագարակից՝ ագարակավարձը չվճարելու համար։

5) Ագարակ վարձող իրլանդացիներն գործն այսպէս անհոգ թողնելը կարելի չէ արդարացնել գործի գերժուարութեամբ, քանի որ այդ խնդիրն արդէն որոշուած է Իրլանդիայի վերաբերմամբ, ուր հողի վարձը իջեցրած է 30%, իսկ պարտքերը՝ 61%, մինչդեռ պարլամենտական նեղկայ նիստերում մերժուեց նոյն օրինքը Իրլանդիայի վերաբերմամբ եւ գործադրելու առաջարկը։

6) Մենք մեր պարտաւորութիւնն ենք համարում աւելացնել, որ եթէ պարլամենտն անմիջապէս ձեռք չառնել բոլորովին գործնական միջոցներ իրլանդացի ագարակ վարձողներին կամայականութիւններից ապահովելու համար, այն ժամանակ համարեա անխուսափելի կերպով վշտալի հետևանքներ կառաջանան գրանից ինչպէս ընդհանուր կարգի, նոյնպէս և բոլոր ժողովրդի ապահովութեան համար։ Այս յայտարարութեան տակ ստորագրել են 4 արքեպիսկոպոս և 26 եպիսկոպոս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Ենայի համալսարանը 1889 թուին մտադիր է տօնելու իւր հարիւրամեակը՝ Շիլլերի առաջին գաստխոսութեան օրից սկսած։

*** Գերմանական համալսարաններում ուսանողների թիւը Վիլհելմ II կայսրի գահ բարձրանալու օրը հասնում էր 28,600 հոգու։ Դրանց մեծ մասը փիլիսոփայական բաժնում է — 8,349 հոգի, իրաւաբանական բաժնում՝ 5520 հ. և աստուածաբանական բաժնում՝ 5,847 հոգի։ Լայպցիգի համալսարանական օրգանը այդ թուերն առած բերելով, նկատում է. «28,600 ուսանողներն այնպիսի մի թիւ է, որ ընդ երկար գերմանական դրութիւնն կարող հովի ներքոյ ներկայացնել։ Ցարմանալի և Տարտիմենան լճերը ցամաքեցնելու համար, ջրանցքի վրայ ծախս նշանակուած է 500 միլիոն ֆրանկ։

*** Մօնպէլիէից մօտերքս նկատած հազուագիւտ, որ առաջին քաղաքից երկրորդը ուղարկուել է 25,000 լիտր կեղծած գինի։ Նկատի քաղաքապետար իմանալով այդ, բոլոր այդ գինիները և անմիջապէս ծովն թափել տուեց։

***

Ամերիկայի անունը.—Ընդհանուր տարածուած մի կարծիք է, թէ Ամերիկայի անունն առաջացել է Ամերիկօ Վեսպուչչիի անունից, որ առաջին անգամ բաւական լեռկատար տեղեկութիւններ է հաղորդել Լօրէնց Մեդիչիին գրած նամակի մէջ այն երկրի մասին, որ գտել էր Կոլումբոսը։ Այդ նամակը յետոյ մի քանի անգամ և մի քանի լեզուներով տպուեց և առիթ տուեց այդ երկրին անուանելու «Ամերիկօ նկարագրած երկիրը», «Ամերիկօի երկիրը» և վերջապէս «Ամերիկա»։ Բայց յայտնի երկրագան Ֆիլ-Մարկը, որ լաւ ուսումնասիրել է Ամերիկան, մօտերքս այն կարծիքը յայտնեց, թէ այդ կարծիքն ուղիղ չէ, «Ամերիկա» անունն առաջանում է ուրիշ պատճառներից։ Ամերիկօ բառը կեղծական Ամերիկայում ապրող Մայա ցեղի լեզուով նշանակում է 1) լեռների չղթայ, որ Կոլումբոսի Հանսպաղոր-Հորդութիւնից սկսած յայտնի է իւր ոսկով, և 2) ամերիկական մի ցեղ, որ յայտնի է Ամերիկօ անունով։ Միւս կողմից, Վիսպուչչիի անունն էր Ալբերտ—Albericus, Allerico, և նա փոխուեց Americo կամ Amerigo միայն այն ժամանակից, երբ Սէն-Դիէնէի մի կանոնիկ սկսաւ պնդել, թէ Ամերիկան գտել է Վիսպուչչին և իւր անունով կոչել Americus։ Շեհոթութիւնն աւելացաւ Փան Բազէնի վարմունքով, որ լսելով, թէ Ամերիկա կոչվում է մի նոր երկիր, որ հարուստ է ոսկով, սկսաւ օրացոյցի մէջ մտցնել Ամերիկա սուրբի անունը, իսկ այդ անունով սուրբ ոչ յայտնի էր և ոչ էլ կար, այլ մտածած էր միայն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվ.—Հրատարակուած է Ռուսական Կայսերական պատմական մուզէումի կանոնադրութիւնը.—մուզէումի նպատակն է հաւաքել և պահել հնութեան յուշարձանները, որոնք իրապէս ներկայացնէին ինչպէս ռուս ժողովրդի, նոյնպէս և Ռուսիայում ապրող ազգերի ամբողջ կեանքի կատարեալ պատկերը։ Մուզէումի կողքին պիտի լինի գրադարան ձեռագիրների և տպագրած գրքերի համար։ Մուզէումի բարձրագոյն հսկողութիւնն ու հոգածութիւնը պատկանում է Կայսերական Տան Անձերից եղող նախագահին։

ՄԵՄԵԼ.—Երէկ երեկոյեան ժամը 7-ին Մեմելի առաջով անցաւ գերմանական նաւախումբը, որ ուղևորում է Պետերբուրգ։

ՎԵՆՆԱ.—Նատալիա թագուհին այսօր ուղևորում է Պարիզ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունվ.—Նոցին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրն և Թագուհի Կայսրուհին յուլիսի 4-ին երեկոյեան հաճեցան Պետերբուրգ վերադառնալ։

Գերմանական կայսրի Պետերբուրգ ժամանելու նախագիծը մօտաւորապէս հետևեալն է՝—Տօլբուխինեան փարոսի մօտ ընդունելուց յետոյ, կ'գան Պետերհօֆ։ Առաջին օրը նուիրած կը լինի հանգստութեան և զբօսանքի. կայսրը ուրբաթ կ'այցելէ հանգուցեալ Կայսրի գերեզմանն և գերմանական գեսպանի մօտ նախաճաշելուց յետոյ՝ կ'գնայ Պետերհօֆ։ Առաջին օրը նուիրած կը լինի հանգստութեան և զբօսանքի. կայսրը ուրբաթ կ'այցելէ հանգուցեալ Կայսրի գերեզմանն և գերմանական գեսպանի մօտ նախաճաշելուց յետոյ,

չեղեանց, նաև ուրիշ հեղինակներ և լոմթագիրները, որոնց մանրամասնութիւնը արձանագրուած է առանձին ցուցակով։

19. Հանգուցեալ տիկին Մարիամ Տէր-Ներսէսեանի յիշատակին շինած նոր աւազանի իւր շադրուանով, խողովակներով և այլ պարագաներով ծախքն է բոլորը . . . . . 400 —

20. Ցաղկաձորի և Վարդաձորի մէջերքի մացառները, փշերը և քարերը մաքրելու 63 ր. 40 կոպ. և երկու կտոր վարելահողերը խամհատ անելու 70 ր., ընդամենը 133 40

21. Այսպէսով շինած յատակների ծախքն է . . . 150 —

22. Տէր Մակար Հայրապետի նուիրած 100 րուբլուց խաչկալի վրայ ծախսուելիք վարպետներին, մեխէղէնի, չաքի և այլն միասին 44 ր., մնացեալ նիւթերէնը վանքումը պատրաստուածներուց գործադրուելիք խաչկալի համար, որի վրայ հրինապէս աշխատեց Տէր-Դանիէլ Տէր-Բարսղամեանցն . . . . . 44 —

23. Փաստաբանին՝ վանքի կալուածական վէճը դատարանումը պաշտպանելու վարձ 50 ր., մարկաները, հաւատարմաթղթերի և այլն—18 ր. 30 կոպ., ընդամենը 68 30

24. Վանահայր Թէոդորոս վարդապետ Շերակունուն վճարելիք որոշեալ սննդադրամը 1885, 1886, 1887 և 1888 տարիներում՝ իբրև վարձ հոգևոր կոչմանը պատրաստուողների հետ պարապելու համար . 160 —

25. Պղտատու և մի քանի տեսակ սկացիալ ծառերի . 35 20

Ծանօթութիւն. Ցնկուած ծառերի կէսը բերուած է Ն. Տէր-Ներսէսեանի, իւր քեռորդի ե. Տէր-Գէորգեանի և միւս ծանօթների այգիներից ձի խապէս։

26. Կայսերական, կամ ոզնի-կոսաց և միւս կարևոր պատկերների . . . . . 63 —

27. Ցաղկաձորի և Վարդաձորի անտառը մաքրելուն և այս ձորերի չորս կողմը 500 սաժէն երկարութեամբ ցանկապատելուն . . . . . 125 —

28. Բագուից և Ասթրախանից ուղարկուած զառ կտորներից զգեստ և զարդ պատրաստելուն վանքի և գիւղական անշուք եկեղեցիների համար՝ 69 ր., վանահօր և խնամակալութեան անուամբ տպագրեալ բլանկները պատրաստելուն—16 ր., ընդամենը . . . . . 85 —

29. Դադդանից մինչև Բագուր սալ քարեր բերելու բայլի վարձ՝ 19 ր., մէկ կորի՝ 56 ր., վառօդի՝ քարեր հանելու համար՝ 25 ր., խողովակով ջրամբարի համար ջուր բերելու կապասները գնուեցան՝ 9 ր., ընդամենը . . . . . 109 —

30. Անակնկալ ծախք վանքի և միւս շինութիւնների համար Գանձակի խանութպաններին վճարուած է 186 40

31. Վանքի տեսարանները լուսանկարելուն . . . . . 40 —

32. Ներքնապարիսպների ծախքը վարպետների, մշակների և այլն 349 80

33 Ծախք զանազան արձանագրութիւնների, շինութիւնների յարմարաւոր տեղերումը . . 42 20

Բոլորն ծախքն է 9030 —

Դուրս գալով մուտքը ծախքից 7259 —

Մնում է վանքի վրայ պարտք առ 1-ն յունվարի 1888 ամի 1771 —

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. 1) Մինչև 1880 թիւը վանական կալուածների արդիւնքը որոշուած էր տարեկան 40 ր. և սահմանում էր վանահայր Թէոդորոս վարդապետ Շերակունին, իբրև վարձ ուսուցչութեան վանական դպրոցում. իսկ նրա նոյն թուականումը Նոր-Բայազէտի գաւառի Վանէվանայ վանքը տեղափոխուելուց յետոյ և մինչև 1884 թ. կրկին Ս. Թարգմանչաց վանքը վերադառնալը յետոյ արդիւնքը չարունակաբար գործադրւում է վանքի վերանորոգութեան վրայ, իսկ Թէոդորոս հօրը յատկացրած է վանքի հասոյթներից, իբրև մասնաւոր վարձ քահանայացու աշակերտների հետ պարապելու համար՝ տարեկան 40 ր. և «Մածնաբերդ» ուխտատեղու արդիւնքներից մի մասը։ Բացի այս, Թէոդորոս վարդապետը, Վլիճակային Ատեանի յանձնարարութեամբ, 1876 թուականից պարտաւորուած է քարոզ խօսել Գանձակի վիճակի գիւղերում, որի համար ոչինչ առճիկ չէ ստանում։ 2) Նուիրատու անձինքներից չատերը, բացի դրամական նուէրը՝ ընծայած են վանքին և դպրոցին զանազան անօթներ, զարդեր, ուսանողական և տնտեսական պիտոյք, կարասիք և այլն, կան և այնպիսիները, որոնք միայն կարասիք և պիտոյք են ընծայած առանց դրամական օժանդակութեան, որոնց մանրամասնութիւնները կարելի է տեսնել պատշաճաւոր ժամպահներից։ 3) Վանքի օգտին սահմանուած է 1888 ամից մի կնքեալ տուփ, որ դրած է Ս. Մասանց խորանումը և ընդունւում է գանձանակադրամ։ 4) 16 տարուայ ընթացքում, չհաշուելով ամառուայ միջոցներին վանքումը մնալը,—խնամակալի գանձակից վանքը գնալ-գալը՝ յատուկ վանքի գործերը կարգադրելու և հսկելու համար, կէս մասը ճանապարհի կառքով և միւս կէսը ձիաներով, հասկանալի է, թէ ոչքան ծախք կուներ 32 վերստ հեռաւորութիւնը և ծառայով պատելիս։ 5) 1887 թուականում բանանցից մինչև խաչակալ գիւղի մօտաւոր սահմանները «Քարկասլ» անուանեալ ձանապարհին նեղ ու քարքարուտ տեղերը շինել—լայնացնել տուաւ խնամակալը իւր ծախքով, մօտ 300 սաժէն երկարութեամբ, որովհետև վանքի միջոցները չեն ներում այնպիսի կողմնակի ծախսեր անել։—6) Խնամակալին մեղադրում են, որ գանձանակադրամի կոպէկները ընդունելով՝ ի նպաստ վանուց, շատ անգամ մերժել է նա գիւղացիների առաջարկութիւնը՝ վանքի հանգը գրաստ արածացնելու համար վարձով տալու։ Իբրև, այդ տեսակ առաջարկութիւնները մերժվում են, օգտուելս համարելով նորաբոյս անտառի պահպանութիւնը անասնոց մուտքից և ոտնահարութիւնից՝ մինչև որ նա կը հասնի ցանկալի բարգաւաճութեան և վանքի ձորերից ըստ առաջնոյն չրեր կը բղխեն առատօրէն, որոնք արդէն հետզհետէ սկսել են բղխել, մի մեծ չրամբար շինելու և մերձաւոր շրջապատող վանական հողերը ջրելու համար։ 7) Եթէ միջոցները նորեն, վանքի հողերը ազրով պարարտացնուի և չրամբարը շինուի, այնուհետև վանքի կալուածքը բաւականին արդիւնարեր կը լինի և միաբանների ու գիշերօթիկ աշակերտների դրութիւնը մասամբ կ'թեթևանայ։ Վանից դրսից օժանդակութեան սպասելու։ 8) 1872—1880 թուականներումը հանգանակուած է բաւականին գումար Գանձակի վիճակի, այն է՝ Բանանցի, Գետաշենի, Փլբի և միւս գիւղերի ծխական ուսումնարանների համար, բայց հիմնական հաշիւները գանուում են նոյն գիւղական հոգաբարձուների մօտ և չեն կառն վանքի հաշուին։ 9) Ս. Թարգմանչաց վանքը 16—17 տարի առաջ ներկայացնում էր մի կատարեալ աւերակ, այժմ նա՝ վերոյիշեալ ծախսերից յետոյ՝ վերանորոգուած ու բարեպարզուած է վայելչապէս, ունի հինգ բաւականին ընդարձակ, քարաշէն, լուսաւոր յարմար սենեակներ երկու նախասենեակներով, մեծ պատշգամբով ու ներքնատնով—մառանով, ևս առանձին ամբարատուն, գործիքների պահարան, Թորնատուն, խոհանոց մի նախասենեակով և պատշգամբով, պարտէզ, պարիսպները չորս մուտքերով դրսից, սալլուղիք, առանձին գաւիթ անասնոց, գոմ, կամուրջ, կամրևոր կահ-կարասիք, տնտեսական պիտոյք, մատենադարան և այլն և այլն։ Եւ 10) Վանքի և նրա դպրոցի չարաճաճութեան և ապահովութեան համար՝ եթէ միջոցները նեբեն՝ հարկաւոր է կիսակատար գործերը վերջաւորել և կառուցանել յետագայ նոր շէնքերը. ա) նոր շինուածքը երկարատև պահելու համար՝ պէտք է նրա տանիքը կղմինտրով (черепичная крыша) ծածկուի. բ) բոլոր սեղ. նեակները պէտք է սրել կրով-աւազով և մնացեալ երեք սենեակներին ապակեայտով յատակ շինել, որի համար մօտ օրերումս մեծ. պարոն Դաւիթ Պատուով 200 փութ աստիյլտ է ընծայել. գ) մի նոր լայնարձակ շէնք եթէ շինուի երկդասեան դպրոցի համար, այնուհետև այժմեան շէնքից մի մեծ սենեակ կարելի է յարմարացնել գիշերօթիկ աշակերտների համար, Թէև ոչ աւելի քան 10—12 հոգի, որ լինում են հեռաւոր գիւղերից, իսկ ուրիշ աշակերտներից մնում են գիշերները թաչակալ գիւղումը լրիւն բարեկամների մօտ. դ) Ձիթհանքի. ե) մեղուատուն. զ) Թռչնատուն. է) Ջրամբար մեծ, որի համար ջուրը կը բերուի խողովակներով 200 սաժէն հեռաւորութեամբ Զորամէջի աղբիւրներից. ը) վանքին շրջապատող փոքրիկ անտառը հարկաւոր է ցանկապատով և առանձին պահապաններով պահել, եթէ ոչ անհնար է մերձաւոր թաչակալ գիւղի ռամիկ ժողովուրդի յափշտակասէր և անասնապահութեամբ ապրող ձեռքերից ազատել. թ) զանգակատունը կարօտ է նորոգութեան. և ժ) այս ամենը յաջողութեամբ և խոհեմ տնտեսութեամբ կատարելու համար հարկաւոր է ընտրել Գանձակից և թաչակալ գիւղից հոգաբարձուներ, որոնք վանահօր նախագահութեամբ ձեռնարկէն գործին և վերջաւորէն ըստ ներման հանգամանաց և նիւթական միջոցների։

Խնամակալ վանական կալուածոց և դպրոցի՝ Ն. Տէր-Ներսէսեանց.

—

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղուած 1872—1887 թուականների Մայր Տումարից Սրբոց Թարգմանչաց վանքի։

1) Ի 1-ն սեպտեմբերի 1878 ամի, յ3-ն սեպտեմբերի և ի 6-ն նոյեմբերի 1879 ամի արձանագրուած են Մայր Տումարումը ստուգութիւններ՝ ստորագրութեամբ վանահայր գեր. Թէոդորոս վարդապետ Շերակունուոյ, յետոյ ժամանակաւոր պաշտօնակատարի վանահօր՝ տէր-Յովհաննէս քահանայ Տէր Աւետիքեանի, վանական դպրոցի նախկին հոգաբարձուներ՝ պ. պ. Յովհաննէս Բաղիեանցի, Աստուածատուր Եալխոլոզեանցի, Յարութիւն Մկրտչեանցի, Սահակ Յարութիւնեանի և խնամակալ Ներսէս Տէր-Ներսէսեանցի, որով յայտնուած է նոյն ժամանակամիջոցի եկամտական հաշուեկիռքը, իսկ Հայր Թէոդորոս վարդապետի Նոր-Բայազէտու վանէվանայ վանքը տեղափոխուելուց յետոյ և 1880 թուից հոգաբարձուների գործունէութեան դադարումից յետոյ, բոլոր եկամտական հաշիւների պահպանելը և վերանորոգութեան գործն չարունակութիւնը կատարել է վանական դպրոցի և կալուածոց խնամակալ Ներսէս Տէր-Ներսէսեանցը, որի կարգադրութեամբ վանական դպրոցը նոյն 1880 թուին տեղափոխուեցաւ վանքից խաչակալ գիւղը ծխական ուսումնարանի անունով, որ և չարունակուեց մինչև 1885 թուականի սկիզբը, այն է՝ մինչև բոլոր ծխական ուսումնարանների ընդհանուր փակումը Կովկասի հայարնակ տեղերում։

2) Հայոց ուսումնարանների ընդհանուր փակումից յետոյ, Սրբոց Թարգմանչաց վանքի միջոցները դեռ ևս չեն ներում վերջին Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան հիման վրայ նորից բանալ վանական դպրոցը, ուստի Թէոդորոս վարդապետ Շերակունուոյ Ս. Թարգմանչաց վանքը վերադառնալուց յետոյ, 1884 թուի վերջերում, կրկին վանահայրութեան պաշտօնով, նա ընդունումէ իւր մօտ մինչև չարաճաճ աշակերտները, որոնք յատուկ Հոգևոր կոչման համար են պատրաստվում, սովորելով եկեղեցական ժամակարգութիւն և քահանապատշաճ գիտելիք, այն է՝ կանոնաւոր ժամասացութիւն, մեկնութիւն և անսխալ ընթերցանութիւն Սուրբ Գրոց և ծիսակատարութիւն ըստ Հոգևոյ Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ, և որի համար նա ստանում է վանքի բոլոր հասոյթներից տարեկան միայն 40 րուբ. և «Մածնաբերդ» ուխտատեղու արդիւնքների մի մասը.—բայց որովհետև խաչակալ գիւղը արդէն կարեւորութիւն է զգում ծխական ուսումնարանի, ուստի Ներսէս Տէր-Ներսէսեանը իւր սեպհականութիւնից այս տարուայ սկզբումը նուիրած է յիշեալ գիւղին և նրա գրաւոր կարհատ ու կիրանց գիւղերին երեք հարիւր րուբ., որպէս զի նրանք նախապատրաստութիւններ տեսնեն գոնէ 1888 թուականի աշնանը բանալ այդ ուսումնարանը, որի չարմարաւոր կենդրոնատեղին է «խաչակալ» բազմամարդ գիւղը։

3) Ներսէս Տէր-Ներսէսեանը վարելով խնամակալութեան ծանր պաշտօնը միայնակ, ոչինչ չխնայելով այս գործը առաջ տանելու համար և չսպասելով կամաւոր նուիրատուութեանց, իւր սեպհականութիւնից չարունակաբար արել է անհրաժեշտ և ընթացիկ ծախքերը ըստ կարելոյն լրացնելու, որը հասնում է նրանից, որ առ 1-ն յունվարի 1888 ամի վանքի վրայ ունի նա մուտքից աւելորդ ծախսած մէկ հազար եօթը հարիւր եօթանասուն և մէկ րուբ. (1771 րուբ.). բացի այս, նա 1880—1887 թուականներումը անընդհատ 1500 մինչև 2000 ր. ունեցել է ծախսած վանքի վրայ՝ առանց որևէ տոկոսի և դեռ չարունակում է այդ ծախքերը, երբ անհրաժեշտ գէպքը և վանական կալուածոց ապահովութիւնը պահանջում է այդ, յուսալով, որ բարեպաշտ, կրօնասէր և ուսումնասէր հայազնեայք չեն խնայիլ աջակցել և օգնել նրան բարոյապէս և նիւթապէս։

4.) Ն. Տէր-Ներսէսեանը իւր արած ծախքերի վճարման համար ունի ըստ մեծի մասի նօտարական վաւերացմամբ և մասնաւոր ստացած ստորագրութիւններ ունից հարկն է՝ բացի մշակներից։ 1888 թուականից բոլոր մուտքը և ծախքը կանոնաւոր կերպով մացնելու է այս տումարի մէջ համաձայն հրամանի Լուսաւորչական Հայոց Սինոդին Սրբոյ Էջմիածնայ, ի 13 ն մայիսի 1887 ամի №1615 յանուն Տէր-Ներսէսեանի։

և 5.) Նուիրատուների և միւս արդիւնքների մանրամասնութիւնը յայտնի նուանէ արձանագրած է Մայր Տումարումը, (որը գտնվում է վանահօր մօտ) թէ ով, երբ, որքան և որտեղից է ուղարկուած նուէրը, կամ որպիսի արդիւնքներից վանքը ստացած ունի արդիւնք. բայց որովհետև չկնար մանրամասնութիւնները տպագրելու համար մի քանի լրագրական թերթ հատիւ կը բաւականանայ, ուստի նա առանձին բրօշիւրով կը հրատարակուի նուիրատու անձանց և Հայ Հասարակութեան տեղեկութեան և քննադատութեան համար, բոլոր վերանորոգութիւնները վերջանալուց յետոյ։

Ն. Տէր-Ներսէսեան.

Գանձակ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՈՒ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

Երկար ժամանակ ուսուցչութիւն արած լինելով Հայոց ծխական դպրոցներում, ձեռնտու պայմաններով ցանկանում են տեղ ունենալ Հայոց դպրոցներում Հայոց և ռուսաց լեզուներից, այդ լեզուներով աւանդուղ միւս առարկաներից, Թուաբանութիւնից և ձեռագործութիւնից. հասցէն՝ Учителю Маминонянцъ, оставить на заводѣ Сиракана Теръ Мартиросянцъ. Въ Эриванъ.

(ազ.) 6—1

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Ի

Մտաւոր, բարոյական ախտի և անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. դօկտոր ԲԵՏԱՈՒԻ

Ռուսերէն հրատարակութիւնը երէք գծագիրներով է և գինը 1 րուբլի։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յատնի կորուստից։

1 ր. ապահոված պէտ գրէի հրատարակիչ Ր. Ֆ. Քիրլեյի հաճախանոցի Լայպցիգում՝ ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Kerliey's Yerlags-Magasin in Leipzig).

(M) 50—17

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ акушерки С. З. ХИЗАНОВОЙ

Сололаки, Садовая ул., д. № 42.

ԾՆՆԴԱՐԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՍՕՓԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ

Սօլօլակ, Սադօվայա փողոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և Թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունվում են լրկներ, երկունքով բռնուածներ (ցաւոդներ) և ծննդականներ, որոնք կրնամվում են չարունակ մանկաբարձի հսկողութեան տակ. արվում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։

Ծննդի և ծննդին հետևյալ չորեքի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի։

X—5

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Іюля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարէնկօլի Типографія Л. Г. Крамаренко. Гол пр., д. Читахова.